ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

*№ 07* *31.07.2013թ.*

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով ,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել «Սուբվենցիա» տողը,«Սուբվենցիա» տողի եկամուտը սահմանել 650 հազ. դրամ:
2. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի ընդամենը եկամուտների ճշտված պլանը սահմանել 20 470.8 հազ.դրամ:
3. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի 01.1.1 «Կառավարման ապարատ» գործառնական դասակարգման ծրագրի 4111-«աշխատավարձ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի պլանը ավելացնել 440 հազ. դրամով, 4111-«աշխատավարձ» հոդվածի ճշտված պլանը սահմանել 8 644 հազ. դրամ:
4. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի 05.1.1 «Աղբահանություն» գործառնական դասակարգման ծրագրի 4213-«կոմունալ ծախսեր» հոդվածի պլանը ավելացնել 19 հազ. դրամով,4213 հոդվածի ճշտված պլանը սահմանել 694 հազ.դրամ:
5. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի 09.1.1 «Նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգման ծրագրի 4639- «Դրամաշնորհ ՀՈԱԿ-ին» տնտեսագիտական դասակարգման հոդվածի պլանը ավելացնել 191 հազ. դրամով,4639 հոդվածի ճշտված պլանը սահմանել 4 991 հազ. դրամ:
6. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասի 11.1.2 «Պահուստային ֆոնդ» գործառնական դասակարգման ծրագրի 4891-«Պահուստային միջոցներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի պլանը պակասեցնել 45 հազ. դրամով,4891 հոդվածի ճշտված պլանը սահմանել 501.8 հազ. դրամ:
7. Զանգակատուն համայնքի 2013թ.-ի վարչական բյուջեի ծախսային մասում 01.1.1 «Կառավարման ապարատ» գործառնական դասակարգման ծրագրում ավելացնել տնտեսագիտական դասակարգման 4232-«Համակարգչային ծառայություններ» հոդվածը,4232 հոդվածի ծախսի պլանը սահմանել 45 հազ. դրամ:

Ավագանու անդամներ

1. ________ Արտակ Մարգարյան
(ստորագրություն)

2. ______________ Կողմ Բաբիկ Թևոսյան
(ստորագրություն)

3. ______________ Կողմ Հրահատ Գրիգորյան
(ստորագրություն)

4. /բացակա/ Ավետիք Մայիսյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Հ.Տ[illegible]ԱՆ ԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ______________ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

*№ 08* *31 .07.2013թ.*

## ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2012Թ-Ի № 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով ,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Զանգակատուն համայնքի ավագանու 27.12.2012թ.-ի № 16՝ «Զանգակատուն համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը և Զանգակատան գյուղապետարանի աշխատակազմի 2013թ. աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին», որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Որոշման հավելվածի «Համայնքային ծառայության պաշտոններ» մասի 3-րդ տողում «57 000» թիվը փոխարինել «67 000» թվով:
2. Որոշման հավելվածի «Համայնքային ծառայության պաշտոններ» մասի 4-րդ տողում «56 000» թիվը փոխարինել «65 000» թվով:
3. Որոշման հավելվածի «Քաղաքացիական աշխատանք» մասի 1-ին տողում «47 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
4. Որոշման հավելվածի «Քաղաքացիական աշխատանք» մասի 2-րդ տողում «47 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
5. Որոշման հավելվածի «Քաղաքացիական աշխատանք» մասի 3-րդ տողում «47 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
6. Որոշման հավելվածի «Տեխսպասարկման անձնակազմ» մասի 1-ին տողում «47 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
7. Որոշման հավելվածի «Տեխսպասարկման անձնակազմ» մասի 2-րդ տողում «56 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
8. Որոշման հավելվածի «Զանգակատուն համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ» մասի 2-րդ տողում «47 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
9. Որոշման հավելվածի «Զանգակատուն համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ» մասի 4-րդ տողում «47 000» թիվը փոխարինել «59 600» թվով:
10. Որոշման հավելվածի «Զանգակատուն համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ» մասի 5-րդ տողում «53 000» թիվը փոխարինել «59 600» թվով:

Ավագանու անդամներ

1. ________ Արտակ Մարգարյան
(ստորագրություն)

2. ______________ կողմ Բաբիկ Թևոսյան
(ստորագրություն)

3. ______________ կողմ Հրահատ Գրիգորյան
(ստորագրություն)

4. /բացակա/ Ավետիք Մայիլյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

ՀԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

*№ 09* *31 .07.2013թ.*

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 –րդ մասի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

1. Զանգակատուն համայնքի սեփականություն հանդիսացող՝Պ.Սևակի փող. 44/1 հասցեում,0019-011-001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 73.27 ք.մ. մակերեսով հասարակական շինությունը և շինության զբաղեցրած ու սպասարկման հասարակական կառուցապատման 0019-0011 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.00879 հա հողամասը աճուրդ-վաճառքով օտարել:
2. Շինության և հողամասի մեկնարկային գինը,հիմք ընդունելով հասարակական նշանակության վերոնշյալ շինության շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը և հողամասի կադաստրային արժեքը,սահմանել 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) դրամ:

Ավագանու անդամներ

1. ________ (ստորագրություն) կող Արտակ Մարգարյան
2. ________ (ստորագրություն) կող Բաբիկ Թևոսյան
3. ________ (ստորագրություն) կող Հրահատ Գրիգորյան
4. /բացակա/ Ավետիք Մայիսյան

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ (ստորագրություն) Է.ՍԱՀԱԿՅԱՆ